

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու



ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Հոդվածում իրավունքի տեսության դիրքերից իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա իմաստավորվել է սահմանադրություն երևույթը՝ վերացարկվելով սահմանադրություն հասկացության ճյուղային ըմբռնումներից: Յույց է տրվել իրավունքի գերակայության սկզբունքի հիմնարար նշանակությունը իրավունքի արտահայտման ձևերի համակարգի վրա: Այդ խնդրի հետազոտման համար հիմք է ընդունվել իրավաբանական իրավահասկացողության վարկածը, այսինքն՝ օրենքի և իրավունքի տարբերակման վրա կառուցված իրավահասկացողությունը: Հետազոտության արդյունքն այն է, որ Սահմանադրությունը, լինելով իրավունքի էության արտահայտման առաջին և առաջնային ձև, իրավունքի գերակայության ուժով ձեռք է բերում սեփական գերակայություն իրավունքի մնացած ձևերի աստիճանակարգության մեջ, ամբողջ իրավական համակարգում: Այդպիսով, Սահմանադրությունն իրավունքի էությունն արտահայտող և իրավունքի գերակայության ուժով ընդունված անհատների, պետության, հասարակության հիմնական օրենքն է, որն իրավունքի էության առաջին ու առաջնային պաշտոնական արտահայտիչն է, հասարակական դաշինքի ձև, որի շնորհիվ ունի բարձրագույն իրավաբանական ուժ ու հիմնարար նշանակություն իրավաստեղծ, իրավակիրառ գործունեության, ինչպես նաև անհատական ու հասարակական իրավագիտակցության համար:

Հիմնարար բառեր- իրավունք, իրավունքի էություն, գերակայություն, սահմանադրություն, իրավահասկացողություն, հավասարություն, ազատություն, արդարություն:

Իրավունքի գերակայության սկզբունքը հիմնարար նշանակություն ունի իրավունքի արտահայտման ձևերի համակարգի վրա: Փորձենք իրավունքի տեսության դիրքերից իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա քննարկել սահմանադրություն երևույթը՝ վերացարկվելով սահմանադրություն հասկացության ճյուղային ըմբռնումներից:

Այս խնդրի հետազոտման համար հիմք ընդունենք իրավաբանական իրավահասկացողության, այսինքն՝ օրենքի և իրավունքի տարբերակման վրա կառուցված իրավահասկացողությունը: Ըստ Վ. Ս. Ներսեսյանցի՝ ազատական իրավական իրավահասկացողության իրավունքը ձևական հավասարություն է, որը ներառում է իրենում այնպիսի բաղադրատարրեր, ինչպիսիք են վերացական համընդհանուր հավասար չափը, ձևական ազատությունը և արդարությունը: Իրավունքը՝ որպես հասարակական հարաբերությունների իրավական ձև, իրենից ներկայացնում է հավասարության, ազատության, արդարության ձևական բնութագրերը¹:

Իրավունքի այս էությունն իր արտահայտու-

թյունն է գտնում առաջին հերթին օրենքներում, որոնք իրավունքի էության և բովանդակության արտաքին արտահայտման պաշտոնական որոշակի ձևերն են:

Սահմանադրությունն այս մոտեցման պայմաններում համարվում է իրավունքի առաջնային (առաջին և գլխավոր)՝ պաշտոնական արտահայտման ձև, իրավունքի նորմերի գոյության և ամրագրման պաշտոնական որոշակի (ինստիտուտավորված) աղբյուր: Այդ հանգամանքի ուժով Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, գերակայություն:

Քանի որ իրավունքի նյութական հիմքը հասարակությունն է և մարդը, ուստի Սահմանադրությունը հասարակության հիմնական օրենքն է՝ որպես հասարակական դաշինքի ձև, որում համակարգված կերպով արտահայտվում են իրավունքի էությունից բխող պոզիտիվ իրավական դրույթները: Նման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև իրավունքի՝ որպես սոցիալական կարգավորիչի գործառույթներով. կարգավորել՝ միաժամանակ ապահովելով դինամիկական և որոշակիությունը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Հենց դա է, որ դրական իրավական մնացած աղբյուրները պարտադիր պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այս մոտեցումից ելնելով՝ կարող ենք պնդել, որ Սահմանադրությունը հիմնական օրենք է և՛ անհատի, և՛ հասարակության, և՛ պետության համար: Սակայն հասարակական այդ սուբյեկտներից ամեն մեկի համար իրավունքի գերակայությունը և Սահմանադրությունն ունեն տարբեր նշանակություն:

Սահմանադրության առկայությունը չի արգելափակում իրավունքի գերակայության սկզբունքի գործողությունն անհատի և հասարակության նկատմամբ: Սակայն պետության համար Սահմանադրությունը բուն իմաստով հիմնական օրենք է, որովհետև պետությունը չունի ազատություն, այլ սահմանափակված է հիմնական նորմով, այսինքն՝ կարող է անել միայն այն, ինչ թույլատրված է Սահմանադրությամբ (օրենքով): Անհատները և հասարակությունը կարող են անել ամեն ինչ, ինչն արգելված չէ Սահմանադրությամբ և օրենքով: Այսպիսով, դրականացված իրավունքի պայմաններում անհատը և հասարակությունը շարունակում են օգտվել իրավունքի գերակայության բարիքներից՝ բնական իրավունքներից, այնինչ՝ պետությունը չունի այդպիսի հնարավորություն:

Այս տեսանկյունից սահմանադրագիտության մեջ ընդունված բազմաթիվ մոտեցումներ քննարկման տեղիք են տալիս: Օրինակ՝ վիճելի է այն հիմնահարցը, թե ում հիմնական օրենքն է Սահմանադրությունը՝ հասարակության, թե՞ պետության:

Տ. Խաբրիևի և Վ. Չիրկինի կարծիքով, եթե Սահմանադրությունն ամրագրում է հասարակական կարգերի որոշ հիմունքներ, ապա դա նրան չի դարձնում հասարակության օրենք²: Այն մնում է որպես պետության իրավական ակտ, «պետական կամքի ակտ, որը, չնայած, կարող է արտահայտվել և՛ հիմնադիր ժողովով, և՛ խորհրդարանով, և՛ անմիջապես ընտրողների կողմից հանրաքվեով»³: Այս դեպքում, մեր կարծիքով, անհասկանալի է մնում Սահմանադրության հատուկ ընդունման ձևը հատկապես հանրաքվեի միջոցով: Այլ հեղինակներ ևս Սահմանադրությունը համարում են պետության հիմնական օրենք, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Այսպիսի մոտեցման հիման վրա նրանք Սահմանադրությունը բնորոշում են որպես պետության հիմնական օրենք, որը որոշում է պետական իշխանության իրականացման սահման-

ները և իրենից ներկայացնում է երկրի պետական կարգը, պետության իրավական համակարգի սկզբունքները և պետության ու բնակչության փոխհարաբերությունների հիմունքները կարգավորող նորմերի ամբողջություն⁴:

Ամերիկյան սահմանադրագետներից Թ. Պեյնը գտնում էր, որ. «...կան բոլոր հիմքերը՝ ենթադրելու, որ իրենք՝ անհատները, յուրաքանչյուրն իր անհատական և ինքնիշխան իրավունքով, մտել են պայմանագրի մեջ միմյանց հետ կառավարություն կազմավորելու համար: Եվ դա միակ եղանակն է, որով իրավունք ունեն ստեղծվել կառավարությունները և միակ հիմքն է, որի վրա կարող են նրանք գործել»⁵: Ընդ որում, ըստ Թ. Պեյնի՝ հասարակական պայմանագիրը կնքում են անհատները, այլ ոչ թե պետությունը և հպատակները: Ըստ Թ. Պեյնի՝ հասարակական պայմանագրի ուժով հիմնադրվում է կառավարություն և Սահմանադրություն: «Սահմանադրությունը ոչ թե անվանում է, այլ իրական առարկա. այն գոյություն ունի ոչ միայն երևակայության մեջ, այլև իրականության մեջ, և այնտեղ, որտեղ չի կարելի այն ցույց տալ երևացող կերպով, չկա սահմանադրություն: Սահմանադրությունը առարկա է, որ նախորդում է պետությանը. պետությունը Սահմանադրության երեխան է: Երկրի Սահմանադրությունը ոչ թե կառավարության ակտն է, այլ ժողովրդի, որը ստեղծում է կառավարություն: Սահմանադրությունը դրոյթների ամբողջություն է, որին կարելի է վկայակոչել, հղումներ անել հողված առ հողված»⁶:

Այսպիսով, Սահմանադրությունն իրավունքի էությունն արտահայտող և իրավունքի գերակայության ուժով ընդունված հիմնական օրենքն է, որն ունի հիմնադիր նշանակություն և՛ հասարակության, և՛ պետության, և՛ անհատի համար: Այս առումով անընդունելի է այն մոտեցումը, որ սահմանադրությունը դիտարկում կամ համարում է միայն որպես պետության ստեղծման հիմնադիր ակտ⁷: Սահմանադրությունը հիմնական օրենք է, որովհետև այն իրավունքի էության առաջին ու առաջնային արտահայտիչն է և դրա ուժով ունի բարձրագույն իրավաբանական ուժ ու հիմնարար նշանակություն իրավաստեղծ, իրավակիրառ գործունեության, ինչպես նաև անհատական ու հասարակական իրավագիտակցության համար: Այս հասկացությունը էական հակասության մեջ է մտնում սահմանադրագիտության մեջ առկա սահմա-

նադրության մի շարք բնորոշումների հետ, որոնք կառուցված են նեղ պետականագիտական դիրքերից: Օրինակ՝ «Արդի Սահմանադրությունը պետության հիմնադիր իրավական ակտ է, հիմնական օրենքը, որ ընդունվում և փոփոխվում է բարդեցված կարգով, ունի կարգավորման հատուկ սուբյեկտ, օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով և համարվում է իրավաբանական բազա իրավաստեղծագործության, իրավակիրառման և իրավագիտակցության համար»⁸:

Սահմանադրագիտության մեջ քննարկվող հիմնախնդիրներից մեկն էլ «սահմանադրության էություն» հասկացությունն է: Այդ հասկացության ներմուծումը բերեց նրան, որ իրավաբանական գրականության մեջ սկսեցին մշակել «սահմանադրության էություն» եզրույթը, իսկ սահմանադրության մեջ տարբերակել իրավաբանական և սոցիալական էությունը⁹: Այս առումով պետք է նկատի ունենալ կարևոր մի հանգամանք. Սահմանադրությունը, լինելով իրավունքի (էության) արտահայտությունը, չունի սեփական ինքնուրույն էություն: Այն երևույթ է, ձև, որ կոչված է արտահայտելու իրավունքն իր էությամբ: Այս մոտեցման համար մեթոդաբանական նշանակություն ունի Վ. Ներսեսյանցի հիմնավորումը, որ. «...օրենքը (դրական իրավունքը), ինչպես և պետությունը, չունի սեփական էություն, իրավունքից տարբերվող էություն»¹⁰:

Ասվածը կարելի է վերագրել նաև Սահմանադրությանը: Հետևաբար, Սահմանադրությունը իրավունքի էությունը (բնական իրավունքները կամ իրավահավասարությունը) արտահայտող համապարտադիր ուժով օժտված իրավական օրենք է: Եթե Սահմանադրությունն ունի իր սեփական էությունը, նշանակում է այն կարող է նաև շեղվել իրավունքից, կտրվել դրա էությունից, իսկ դա նշանակում է, որ այն կարող է նաև «ոչ» իրավունքը կամ իրավունքի էությանն անհարիրը դարձնել իրավունք: Սա արդեն անընդունելի է իրավունքի գերակայության սկզբունքի դիրքերից:

Հնարավոր է նաև Սահմանադրության շեղում իր էությունից, որովհետև ի վերջո Սահմանադրությունը մարդակերտ է: Սակայն էությունից շեղված Սահմանադրությունն արդեն իրավական բնույթ ունեցող Սահմանադրություն չէ, այսինքն՝ ոչ իրավական, հակաիրավական, կամայականության կամ բռնապետության Սահմանադրություն է, որն էլ հենց դրա՝ իրավունքից շեղված էությունն է, բայց ոչ

իրավունքի էությունը: «Սահմանադրության էություն» հասկացության կողմնակիցները ևս նկատում են այդ օրինաչափությունը: Այդ խնդրի լուծումը տեսնում են Սահմանադրության մեջ երկու էություն դնելու մեջ՝ իրավաբանական-ձևական և փաստական-նյութական: Արդյունքում սահմանադրագետներից ոմանք առաջ են քաշում ձևական և նյութական իմաստով Սահմանադրություն հասկացությունները¹¹:

Սահմանադրագիտության մեջ ընդունված է նաև «Սահմանադրության բովանդակություն» հասկացությունը, ընդ որում, այդ բովանդակությունը տեսականորեն կապվում է Սահմանադրության էության հետ¹²:

Արված վերլուծությունը ցույց տվեց, որ Սահմանադրությունը չունի սեփական էություն, սակայն այս համատեքստում «Սահմանադրության բովանդակություն» հասկացությունն ընդունելի է, և դրա տակ պետք է հասկանալ իրավունքի գերակայության սկզբունքից բխող անհատ, պետություն, հասարակություն, հասարակական հարաբերությունների կարգավորում՝ իրավունքի էությունը կյանքում կենսագործելու համար: Հենց սա կարելի է համարել Սահմանադրության սոցիալական բովանդակությունը, որը, սակայն, էականորեն կարող է տարբերվել ընդունված վարկածից, որ սահմանադրության սոցիալական բովանդակությունը պայմանավորված է «այս կամ այն ուժի սոցիալ-քաղաքական շահերով»¹³:

Սահմանադրության իրավաբանական բովանդակությունն իրավունքի էությունից բխող և այն արտահայտող պոզիտիվ նյութն է՝ նորմեր-կանոնները, նորմեր-նպատակները, նորմեր-սկզբունքները, նորմեր-բնորոշումները, որոնք ընդգրկում են հասարակական համակարգի երեք ենթահամակարգերը՝ մարդ-անհատ, պետություն, հասարակություն հարաբերությունների կարգավորիչ հիմունքները՝ ապահովելու համար դրանց իրավաչափությունը, այսինքն՝ իրավունքին համապատասխանելը: Սահմանադրությունը չունի քաղաքական հատկություններ. այն գուտ իրավունքի գերակայությունից բխող իրավական օրենք է, որի հատկություններն ունեն իրավական բնույթ:

Լինելով իրավունքի էության արտահայտման առաջին և առաջնային ձև՝ Սահմանադրությունն իրավունքի գերակայության ուժով ձեռք է բերում սեփական գերակայություն իրավունքի մնացած

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ձևերի աստիճանակարգության մեջ, ամբողջ իրավական համակարգում: Այդ գերակայությունն արտահայտվում է Սահմանադրության հետևյալ հատկություններով.

1) Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ. մնացած բոլոր իրավական ակտերը ընդունվում են Սահմանադրության հիման վրա և ի կատարումն Սահմանադրության դրույթների, իսկ հակասությունների դեպքում գործում է Սահմանադրությունը,

2) Սահմանադրությունն առաջատար տեղ ունի ողջ իրավական համակարգում, օրենսդրության ճյուղերում. այն համակարգային միջուկ է, ընդ որում, ոչ միայն դրանց, այլև ողջ հասարակության համար,

3) Սահմանադրությունը, լինելով իրավունքի էության առաջին և բարձրագույն ուժ ունեցող օրենք, կատարում է հսկայական իրավակազմավորող գործառույթ: Սահմանադրությունն իր կարգավորիչ ոլորտների՝ մարդու, հասարակության, պետության նկատմամբ գործառույթը կատարում է երկակի կերպով. **առաջին**՝ իր անմիջական գործողությամբ, **երկրորդ**՝ ընդհանրապես իրավաստեղծագործության (օրինաստեղծագործության) գործընթացի վրա նորմատիվ կողմնորոշիչ ներգործությամբ:

4) Սահմանադրական իրավական նորմերը՝ կանոնները, սկզբունքները, նպատակները, բնորոշումները, գլխավոր չափանիշ են համարվում նաև իրավաիրականացնող գործունեության համար, բոլոր տեսակի ակտերի մեկնաբանման ու կիրառման, իրավաբանական արարքների կատարման համար:

Այսպիսով, Սահմանադրությունն իրավունքի էությունն արտահայտող և իրավունքի գերակայության ուժով ընդունված անհատների, պետության, հասարակության հիմնական օրենքն է, որն իրավունքի էության առաջին ու առաջնային պաշտոնական արտահայտիչն է, հասարակական դաշինքի ձև, որի շնորհիվ ունի բարձրագույն իրավաբանական ուժ ու հիմնարար նշանակություն իրավաստեղծ, իրավակիրառ գործունեության, ինչպես նաև անհատական ու հասարակական իրավագիտակցության համար:

¹ Տե՛ս Երսեսյանց Բ.Ս. *Общая теория права и государства*. М., 1999, С. 70.

² Տե՛ս Իլյинский И.П. *Конституции мира и других народов*. М., 1968; Хабриева Т.Я., Чиркин В.Е., *Теория современной конституции*, М., 2005, С. 36-37.

³ Տե՛ս Хабриева Т.Я., Чиркин В.Е. *Теория современной конституции*, М., 2005, С. 36-37.

⁴ Տե՛ս *Конституционное право зарубежных стран*. / Под общ. ред. М. В. Боглая, Ю. И. Лейбо, Л. М. Энтина, М., 2005, С. 63.

⁵ Տե՛ս Բейн Т. *Избр. произведения* М., 1959, С. 207.

⁶ Տե՛ս Բейн Т. *Избр. произведения*. М., 1959, С. 207-208.

⁷ Տե՛ս Սահմանադրությունը պետության ստեղծման հիմնադիր ակտ են համարում բազմաթիվ հեղինակներ. տե՛ս օրինակ՝ Хабриева Т.Я., Чиркин В.Е. *Теория современной конституции*, М., 2005, С. 34-35.

⁸ Տե՛ս Хабриева Т.Я., Чиркин В.Е. *Теория современной конституции*, М., 2005, С. 39.

⁹ Տե՛ս Այդ մասին մանրամասն տե՛ս Хабриева Т.Я., Чиркин В.Е. *Теория современной конституции*, М., 2005, С. 41:

¹⁰ Տե՛ս Երսեսյանց Բ.Ս. *Общая теория права и государства*. М., 1999, С. 72.

¹¹ Տե՛ս *Конституционное право зарубежных стран* /Под общ. ред. М.В. Баглая, Ю. И. Лейбо, Л.М. Энтина, М., 2005, С. 68, 1056).

¹² Տե՛ս Хабриева Т.Я., Чиркин В.Е. *Теория современной конституции*, М., 2005, С. 50.

¹³ Տե՛ս Хабриева Т.Я., Чиркин В.Е. *Теория современной конституции*, М., 2005, С. 51.

Армен Асатрян

Преподаватель международного научно-образовательного центра
Национальной академии наук Республики Армения,
кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Конституция с позиций верховенства права

В статье с позиций теории права на основе принципа верховенства права обсуждено явление Конституция. Показано основополагающее значение принципа верховенства права в системе форм проявлений права.

Заключение данного исследования: Конституция является основным законом индивидов, государства, общества, выражает сущность права и принята силой верховенства права. Конституция является первым и ведущим официальным выразителем сущности права, форма общественного союза, благодаря чему обладает высшей юридической силой и имеет основополагающее значение для правотворческой, правоприменительной деятельности, а также для индивидуального и общественного правосознания.

Ключевые слова: право, сущность права, верховенство, конституция, правопонимание, равенство, свобода, справедливость.

Armen Asatryan

Lecturer in International Scientific-Educational Center
of the National Academy of Sciences of the Republic of Armenia,
PhD of Law

SUMMARY

Constitution from the standpoint of the rule of law

In the article from the standpoint of the theory of law based on the rule of law discussed phenomenon Constitution. It is shown the fundamental importance of the principle of the rule of law in the system forms manifestations rights.

The conclusion is that the Constitution is the fundamental law of the individuals, the state, society, which expresses the essence of the right and adopted by the strength of the rule of law. The Constitution is the first and leading official expression of the essence of law, a form of social union, so has the supreme legal force and is fundamental to the lawmaking and law enforcement, as well as for individual and public legal conscience.

Keywords: Law, the essence of law, supremacy, constitution, legal thinking, equality, freedom, justice.